

I

Լրացավ մեծանուն լեզվաբան, հայագետ Հրաչյա Աճառյանի ծննդյան 125-ամյակը: Նրա գրչին են պատկանում տասնյակ մենագրություններ ու բառարաններ, երկու հարյուրից ավելի մեծարժեք ուսումնասիրություններ՝ նվիրված հայոց լեզվի և հայագիտության բազմազան բնագավառներին: Հ. Աճառյանն է հիմնադրել հայ գիտական բարբառագիտությունը, շարադրել հայոց լեզվի պատմությունը, հայոց լեզվի համեմատական քերականությունը՝ հայերենը համեմատելով աշխարհի ավելի քան հինգ հարյուր լեզուների հետ: Նա է ստեղծել հայ իրականության մեջ իրենց նախատիպը չունեցող այնպիսի գլուխգործոցներ, ինչպես՝ քառահատոր «Հայերենի արմատական բառարանը», հինգհատորանոց «Հայոց անձնանունների բառարանը», որոնք երկհատոր «Հայոց լեզվի պատմության», բազմահատոր «Հայոց լեզվի լիակատար քերականության» ու բազմաթիվ մենագրական աշխատությունների և ուսումնասիրությունների հետ մեծագույն ավանդ են հայագիտության, հայ և համաշխարհային լեզվաբանության բնագավառներում:

Ստորև ներկայացնում ենք աճառյանական դպրոցի ներկայացուցիչներից մեկի՝ նշանավոր լեզվաբան, պրոֆ. Աշոտ Սուքիասյանի հուշերը:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ


ՄԵԾ ՀԱՅԱԳԵՏՆ ՈՒ ՀԱՅՐԵՆԱԱԵՐԸ  
(Հր. Աճառյանի ծննդյան 125-ամյակի առթիվ)

ԱՇՈՏ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Կես դար անց հուշեր դրել մեծ հայագետի, մոտ և սիրելի մարդու մասին ինձ համար թեև դժվար, բայց և հաճելի ու դյուրին է, քանզի տակավին երիտասարդ տարիներին ստացած բուռն, զգացմունքային սուլավորություններս անցած տասնամյակների ընթացքում արդեն իսկ զգալի ու ըյուրեզացել են:

1940թ. սեպտեմբերին, երբ արդեն Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և դրականության բաժնի առաջին կուրսի ուսանող էի, պարզվեց, որ մեծանուն Հր. Աճառյանը նույն ֆակուլտետի նորաբաց արևելյան բաժնում պարսկերեն և արաբերեն է դասավանդում: Նրա մասին առասպելախառն պատմություններ էի լսել դեռևս դպրոցական տարիներին, իսկ այդ օրերին համալսարանում խոսում էին, որ նա վերջերս է ազատություն ստացել՝ երեքամյա անազատությունից: Շատերիս ցանկությունն էր սեփական աչքերով տեսնել այդ նշանավոր մարդուն:

Այն տարիներին, Աբովյան փողոցի վերջնամասում, եռհարկանի սեփական շենքում էին տեղավորված Համալսարանի բոլոր ֆակուլտետները: Բանասիրական ֆակուլտետի բոլոր բաժինների (Հայկական, ռուսական, ռոմանո-գերմանական լեզուների ու բանասիրության, արևելյան լեզուների) պարապմունքները երկրորդ հերթին էին տեղի ունենում:



Աճառյանի հետ առաջին, անխոս ծանոթությունը տպավորիչ էր: Սպասում էինք հաղթանդամ, փառավոր բեղ-մորուքով, խստահայաց Աճառյանի, տեսանք միջահասակ, աշխույժ կեցվածքով, բարեդեմ, ձեռնափայտով, ակնոցավոր, սովորական, բայց հաճելի մի մարդու: Առաջին ցանկությունն էր ունկնդրել նրան, բայց դրա համար դեռ պետք է տարիներ սպասեինք:

1941թ. սկզբներին լույս տեսավ Հր. Աճառյանի «Հայոց լեզվի պատմության» առաջին հատորը: Շտապեցինք ձեռք բերել: Այժմ այն հազվագյուտ ճարվող գրքերից է: Պարզվեց, որ ուսումնական ծրագրով «Հայոց լեզվի պատմություն» առարկայի դասավանդում ընդհանրապես չի նախատեսվում, Աճառյանն էլ բանասիրական ֆակուլտետի Հայոց լեզվի և դրականության բաժնում այլևս չի դասախոսում: Բայց ինչո՞ւ: Այդ ժամանակ դժվար էր դրա պատասխանը գտնել:

1948 թ. կարճ ժամանակով, փետրվար-մարտ ամիսներին Աճառյանին արտոնվեց հատուկ դասընթաց կարգալավ ավարտական մեկ կուրսում:

Հիշում եմ առաջին օրը: Սպասում էր ամբողջ կուրսը: Ձեռնափայտը թխկթխկացնելով, հաստատ քայլերով մտավ լսարան, մի պահ նայեց ոտնկայս դիմավորող ուսանողների կողմը, բարևեց, հրահանգեց նստել, մոտեցավ ամբիոնին, ցանկանում էր սկսել, նկատեց, որ մի քանիսը դեռ չէին նստել, ժպտալով ասաց. — Ձեզ պատվո սլահա՞կ են կարգել: Սկսեց խոսել: Հիշեցրեց թեման «Հայերենի համեմատական քերականության հիմունքները»: — Ծանոթ է Ձեզ այդ առարկան, — և ինքն էլ պատասխանեց, — հազիվ թե: Դարադրելուց առաջ հարցրեց. — Զինված եք: Այսինքն՝ պատրաստ եք գրելու: Դանդաղ, հստակ, կարճառոտ, պարզ ընդարձակ նախադասություններով, այսինքն՝ աճառյանական ոճով խոսում ու շարադրում էր մեզ համար անծանոթ առարկայի հիմունքները: Որոշ ընդմիջումներով հարցնում էր. — հոգնեցի՞ք, մի փոքր հանգստանանք: Այդ կարճ ընդմիջումներին կատակում էր: Հիշում եմ, հարցրեց. — Ձեր կարծիքով բնության մեջ, կենդանական աշխարհում իգական սեռն է գեղեցիկ, թե՞ արական: Տեղերից անմիջապես բացականչեցին՝ իրական: — Միամիտ-

ներ, գաղանանոցում գոնե առյուծ տեսած կա՞ք: Ձեր կարծիքով, առյուծի էգն է գեղեցիկ, թե՞ արուն: Պատասխան չեղավ: – Մեռավոր չեք, – ասաց նա, – ուշագրություն չեք գարձրել: Արու առյուծը փառահեղ բաշով գեղեցիկ գազան է: Էգը խղճուկ տեսք ունի: Այժմ տարբերեցի՞ք: Հավ և աքաղաղ անշուշտ տեսել ենք, – և ծիծաղելով հարցրեց, – հարցնում եմ, հավն է գեղեցիկ, թե աքաղաղը: Վերջապես ո՞րն է աղոթարանն ավետում իր ծուղորուղուով, հավը, թե՞ աքաղաղը, – և ավելացրեց, որ միայն ձայնը լսելու համար որոշ ժամանակ աքաղաղ է պահել: Վերջում կատակով դիմեց դեղեցիկ աղջիկներից մեկին, – ես եմ գեղեցիկ, թե՞ դու: Այդպիսին էր Աճառյանը: Սիրում էր կատակել, սրախոսել, ըայց երբեմն սրտանց վրդովվում էր, երբ նկատում էր, որ իր կատակի կամ սրախոսության իմաստը ոմանք չէին ըմբռնում:

Դասընթացի ավարտին մոտ 30 կետանոց հարցացուցակ թելադրեց, նաև ավելացրեց, թե ով դասախոսությունն ունկնդրել է, «բավարարն» արդեն ապահովել է:

Քննությունն ձևն անսովոր էր: Սպասում էինք հարցաթերթիկների, ըայց այդ հարցում Աճառյանն ուներ իր սկզբունքը: Ցուցակով մեկական ուսանողի հրավիրում էր քննասենյակ, հանձնարարված հարցացուցակով առաջարկում էր մեկ հարց, սպասում պատասխանի: Պատասխանը լսում էր, եթե անհրաժեշտ էր, լրացումներ անում, գնահատականը նշանակում և հաջողություն մաղթում: Քննությունը երկու ժամում ավարտվեց: Բարձր տրամադրություն հրաժեշտ տվեցինք ուսուցչապետին:

1950թ. ՀՀ ԳԱ լեզվի ինստիտուտը «Բառարանագրություն» մասնագիտության գծով ասպիրանտական տեղերի մրցույթ էր հայտարարել: Մասնագիտությունը նոր էր և հեռանկարային: Մասնագիտական առարկայի քննությունը նշանակված էր սեպտեմբերի վերջերին, Աճառյանի բնակարանում: Նշանակված օրը, եբք ներկայացա, հատկացված տեղում արդեն բաղմել էին հավակնորդները: Երկար չսպասեցինք: Շուտով մեզ մոտեցավ տան տերը, խնդրեց ներկայանալ: Հերթը հասավ ինձ: Համառոտ տվյալներս ուշադիր լսելուց հետո Աճառյանն անսպասելիորեն հայտարարեց. – Աշոտին արգեն ընդունեցի: Մյուսներն աղատ են: Աճառյանը իր որոշումը պատճառաբանեց, թե քանի որ ինքն է գառնալու ասպիրանտի ղեկավարը, և պարագմունքներն իր բնակարանում են լինելու, ուստի և նախընտրում է Աշոտ Աուքիասյանին, և կրկնեց, որ մյուսներն աղատ են:

Մնացինք ես ու համակուրսեցի Լիզա Պետրոսյանը, ես արտագրությունից կտրված, նա արտագրությունից չկտրված տեղերի համար:

Քննությունն սկսվեց: Մեզ լսելուց հետո, մեր ներկայությամբ գնահատականները որոշվեցին և, հաջողության մաղթանքներով ոգևորված, ուրախ ու երջանիկ թողեցինք Աճառյանի բնակարանը:

Նոյեմբերի սկզբից արգեն շաբաթը մեկ անգամ ժամը 11<sup>00</sup>, որպես ասպիրանտ, սեղմում եմ նրա բնակարանի գոտան կոճակը: Սկսվեց ծանոթությունը, հետագայում նաև մտերմությունն Աճառյանի հետ: Պարագմունքների թեման էր՝ «Հատուկ գասընթաց Հայ բառարանագրության պատմության»:

Աճառյանի գրադարանը առանձնապես հարուստ էր բառարաններով: Տեսական գրականություն, որպես օրենք, չէր պահում: Կարգացածը նվիրում էր մտերիմներին կամ գիտական գրադարաններին:

Բառարանների ուսումնասիրության համար աշխատանքի բաժանում կատարվեց: Կարգում էի ես, դրում էր Լ. Պետրոսյանը: Սկզբունքը հետևյալն էր. նախ՝ բերվում էին բառարանի արտաքին տվյալները, ապա առաջաբանի և բառահոգվածների հիման վրա նշվում ստեղծման հանգամանքները, կազմության ու կառուցվածքի հիմունքները, եզրափակիչ, ամփոփիչ գնահատականը տալիս էր Աճառյանը:

Մի քանի ամիս անց, պարապմունքի ավարտին նա ասաց.— Այսօրվա աշխատանքն ավարտեցինք: Լիդա, ազատ ես, Աշոտը կմնա: Նախ հարցրեց ատենախոսության վիճակի մասին: Իմանալով, որ մոտ երկու ամսից նյութերի հավաքելն ավարտելուց հետո անցնելու եմ շարադրանքին, ասաց՝ «գերազանց է»: Բայց բուն խնդիրը հետևյալն էր: Պարզվեց, որ «Հայոց լեզվի համեմատական քերականությունը» ավարտին հասցնելու համար անհրաժեշտ էին որոշ նյութեր և քաջվելով, մի տեսակ անհարմարությամբ առաջարկում էր իմ օգնությունը, կհամաձայնե՞ի արդյոք շաբաթական երկու ժամ տրամադրել այդ աշխատանքին: Առաջարկն անսպասելի էր, բայց պատվաբեր: Անմիջապես ուրախությամբ համաձայնեցի: Ասացի,— ոչ թե երկու ժամ, այլ որքան անհրաժեշտ է, պատրաստ եմ կատարել Ձեր բոլոր հանձնարարությունները: Նա ծիծաղելով ընդմիջեց, թե վաղաժամ չորհրդեմ, առանց ամաչելու ներկայացնեմ պայմաններս և քանի որ գործ եմ անելու, պետք է վարձատրվեմ: Մի սառը քրտինք անցավ մարմնովս, կարմրեցի, շփոթվեցի: Վիճակս, իհարկե, լավ էր հասկանում.— Ընկեր Աճառյան, ինչ վարձատրության մասին կարող է խոսք լինել: Նա, թե՛ — երիտասարդ ես, կյանքը լավ չես ճանաչում: Լավ, Աստված քեզ հետ, թող քո խոսքը լինի: Տարիներ անց միայն հայտնի դարձավ, որ այդ հարցում նա դառն փորձ ունի: Պայմանավորվեցինք հաջորդ երկուշաբթի ժամը 5-ին: Անհամբեր սպասում էի: Պայմանավորված օրը, նշանակված ժամին ներկայացա, Աճառյանը գովեց իմ պարտաճանաչությունը, բացատրեց կատարելիք աշխատանքս, Նոր Հայկազյան բառարանից պետք է դուրս գրեի արմատական ածականները: Ոգևորությամբ սկսեցի: Սպասեց, մի քանի էջ ստուգեց, գնաց հանգստանալու: Այդ տարիներին արդեն կիսաանկողնային կյանք էր վարում: Երկու ժամը դեռ չէր ավարտվել, եկավ, կրկին ստուգեց, գովեց, խրախուսեց, թեյ պատվիրեց և երբ երկու ժամը լրացել էր, ասաց,— զրուցենք մինչև թեյը բերեն: Թեյելու սովորությունը չունեի, հրաժարվեցի. նա թե՛ — չե՞ս ցանկանում ինձ հետ թեյել... Մի խոսքով այս ձևով միշտ դիմադրությունս կոտրում էր:

Հաջորդ աշխատանքն ավելի հետաքրքիր էր. իր «Արմատական բառարանից» պետք է դուրս գրեի հայերեն արմատների հնչյունական տարբերակները: Հետագայում արգեն նորանոր հանձնարարություններ: Այդ նյութերը մտան «Հայոց լեզվի համեմատական քերականությունը» բազմազատոր աշխատության տարբեր հատորներում: Յուրաքանչյուր աշխատանքի ավարտին, վերջում պարտադիր դրել էր տալիս անուն-ազգանունս, որ սույն աշխատանքը կատարվել է իմ ասպիրանտի աշխատակցությամբ:

Այդ հիշատակութեան առթիվ բացատրեց, որ, նախ, կատարած աշխատանքի համար հեղինակն անպայման պետք է հիշատակվի, ավելացրեց նաև, որ այդ անհրաժեշտ է նաև իրեն ասպակավազրելու համար, որպեսզի տվյալ հատվածի հնարավոր վրիպումները Աճառյանին չվերագրվեն: Այդպես ինձ հանգստացրեց հեռատես ուսուցիչս:

Մասնագիտական դասընթացների և նշված աշխատանքների առթիվ համարյա անընդմեջ Աճառյանների այցելուն էի, որով սերտացան ու մտերմացան մեր հարաբերությունները:

Աշխատանքի ընդմիջումներին կամ վերջում նա զրույց էր բացում օրվա նորությունների, իրեն հետաքրքրող առօրյա իրադարձությունների մասին: Նրա հետաքրքրասիրությունը հասկանալի էր. արգեն հրաժեշտ էր տվել սիրելի համալսարանին, տանից դուրս չէր գալիս, հաղորդակցությունը արտաքին աշխարհի հետ խզված էր, մեկուսացած կյանք էր վարում և զրուցակից էր փնտրում: Զրուցելիս էլ ավելի շատ լսում էր, քան խոսում: Եթե ցանկանում էր (իր կարծիքով) որևէ «վտանգավոր» դատողություններ անել, հարցնում էր, թե՞ «սենյակում մարդ կա» և համոզվելով, որ երկուսով ենք, շարունակում էր խոսքը, ինչպես ասում են՝ «աչքը տեսածից է վախենում»: Այդ դերզգուշությունը հետևյալ կերպ էր բացատրում, որ երկուսի խոսակցությունը երրորդի ներկայությունը վտանգավոր է՝ որպես հնարավոր վկայի:

Հայտնի է, որ Հ. Աճառյանը 1937-1940թթ. համատարած բռնությունների տարիներին, մոտ երեք տարի անց է կացրել ԿԳԲ-ի նկուղներում: Այդ մղձավանջային տարիների մասին ընդհանրապես չէր խոսում, մանրամասներ չէր պատմում: Ի՞նչ պատմեք. ճակատի վրա քննիչի հանգրաժ վառ ծխախոտի գլանակից մնացած խարանճ արգեն ամեն ինչ ասում էր: Հայ մտավորականությունն իր խաչն էր կրում: Մ. Աբեղյանը հետագայում պատմել է, որ բանտային կապոցը պատրաստած, սպասելիս է եղել, անքուն գիշերներ անցկացրել, թե ուր որ է իր դուռն էլ են թխկացնելու: Խոսակցության ժամանակ Աճառյանը հաճախ կատակին էր տալիս, թե բանտարկության տարիներն իր համար, որոշ իմաստով նաև օգտակար են եղել: Երկար տարիներ նա տառապելիս է եղել հոգաբորբով (ռեմատիզմ), բժշկական միջոցներով չի կարողացել բուժել, բայց բանտային պայմաններում ապաքինվել է վերջնականապես: Ի հաստատումն իր ասածի՝ նա ոտքերն էր շարժում: Չե՞ք հավատում, տեսեք: Հետաքրքիր մարդ էր Աճառյանը:

Պատմում էր, որ, որպես կանոն, կեսգիշերին էին տանում հարցաքննություն: Մեղադրում էին լրտեսություն մեջ, կտտում՝ ստիպում էին ստորագրել: Մեր ժամանակներում, առավել ևս հետագայում, կարող ենք հարց տալ, թե դրա համար հիմք կա՞ր:

Նա ապրել, ուսանել էր Փարիզում, Ստրասբուրգում, եղել էր շատ երկրներում, աշխատել, դասավանդել Նոր Նախիջևանում, Շուշիում, վերջին անգամ՝ Պարսկաստանում՝ Թավրիզում և այլն: Հետագայում, Խորհրդային Հայաստանում գիտական-նամակագրական կապեր էր պահպանել եվրոպացի նշանավոր լեզվաբանների (Մեյե, Բենվենիստ, Հրոզնի և ուրիշներ) հետ, որը այդ տարիներին խորհրդային տրամաբանությունը հանցա-

գործուծյուն էր որակվում, իսկ բանտարկուծյան համար մի աննշան առիթ, որի «ձևակերպումը» ԿԳԲ-ական արհեստավարծների համար վայրկենական գործ էր: Վերջապես, Աճառյանը 1930-ական թվականների սկզբներին, զանգվածային բռնուծյունների նախօրյակին, համալսարանի դասախոսների մի ժողովում հայտարարել է, թե՛ «մարքսիզմը ուր ուզում եք տարածեք, միայն թե՛ լեզվաբանուծյան մեջ մի՛ խոթեք»: Այս հայտարարուծյան համար նրան չէին ների:

Նրա բանտարկուծյան պատմուծյունն ամբողջացնելու նպատակով անհրաժեշտ է մի փոքր հեռվից սկսել:

1920թ. վերջերին, թավրիզում, որտեղ ուսուցչուծյամբ էր զբաղվում, հանդիպում է բոլշևիկյան Հայաստանից ճողոպրած Արարատ Ղարիրյանին, որն ավարտել էր Երևանի սեմինարիան, հասարակական ակտիվ գործիչ էր եղել, դեկավարել երիտդաշնակցուծյան Երևանի կազմակերպուծյունը, Սարգարապատի հերոսամարտում ցուցաբերած արիուծյան համար պարդեատրվել էր «Գեորգեյան խաչով» և այլն: Այդ եռանդուն երիտասարդը չէր կարող օտարուծյան մեջ դուբս մնալ Աճառյանի հովանավորուծյունից, և նա հովանավորում է:

1923թ. Աճառյանը հրավիրվում է Հայաստան՝ Երևանի պետական համալսարանում դասախոսելու: Որոշ ժամանակ անց հայտնվում է նաև Ար. Ղարիրյանը, դառնում նրա առաջին ասպիրանտը, նրա մտերիմն ու «տան մարդը»:

Ըստ Աճառյանի՝ իր բանտարկուծյան հիմք է ծառայել Ար. Ղարիրյանի իրազեկումը ԿԳԲ-ին, այն, որ տանը, հնագետ-արձանագրագետ Սեդրակ Բարխուդարյանի ներկայուծյամբ Աճառյանը ասել է, թե՛ «Այս ի՞նչ երկիր է, թող թե՛ չկա, որ գրեմ և լսել է, որ Ուկրաինայում սովից մի քանի հարյուր մարդ են մահացել» և այլն:

Նա կալանվում է, և նրան լրտեսի մեղազրանք է ներկայացվում: Պատմում և միամտորեն հավատում էր, թե՛ ամբաստանուծյունը հերքելու նպատակով ավելացրել է, թե՛ ինչո՞ւ միայն մեկ պետուծյան, այլ մի քանի երկրների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի. բացի՝ Թուրքիայից, ու ինքն էլ պարզաբանում, թե՛ ինչպե՞ս կարող է մեկը միաժամանակ մի քանի երկրների լրտես լինել և ուրախանում իր հայտնագործուծյունից:

Կալանքից ազատվելու առեղծվածը նա բացատրում էր բանտից առաջնորդին հղած լատիներեն՝ Մեր հայր. իր կարծիքով, ուշադրավ վերտառուծյամբ դիմումով:

Նրա մահից հետո Հայաստանի Կենտկոմի քարտուղար (1953-1961) Ս. Թովմասյանը (կարճ ժամանակով եղել է ՆԳԺ-ի առաջին տեղակալ) իր հուշերում Աճառյանին ազատուծյուն շնորհելու պատիվը թե՛և իրեն է վերազրում, բայց կարծում եմ, որ այդ դաժան տարիներին Հայաստանում հազիվ թե՛ որևէ մեկը համարձակուծյուն ունենար այդպիսի պատասխանատուծյուն վերցնել իր ուսերի վրա: Աճառյանը բանտից ազատվել է ՆԳԺ-ում Ս. Թովմասյանի պաշտոնավարուծյան շրջանում, բայց նրա բախտը, ըստ երևուծյիս, կանխորոշվել է Մոսկվայում:

Այդ թնջուկը բացվել է միայն վերջերս: Հավաստի տվյալներով նրա ազատմանը նպաստել է միուծյենական ՆԳԺ-ում Անդրկովկասի հար-

ցերով այդ տարիների հայազգի լիազորը, որը Աճառյանին ճանաչել է Շուշիից: Ինչևհետև:

Այդ հարցի առթիվ հիշում եմ նաև հետևյալը: Աճառյանի տանը աշխատանքիս ավարտին, դուրս գալով ննջասենյակից, նա ասաց, որ ուղում է մի զավեշտական դիպվածի մասին պատմել: Նախորդ օրը Ար. Ղարիբյանը եղել է իրենց տանը: Խոսակցության ընթացքում Աճառյանը իբր անցյալի մի հարց ճշտելու ցանկություն ունենալով, հարցնում է, թե նա հիշո՞ւմ է արդյոք Աեդրակ Բարխուդարյանի ներկայությունը խոսակցությունը Ուկրաինայի այդ տարիների սովի, գրելու թղթի բացակայության և այլնի մասին: Դրական պատասխան ստանալով՝ Աճառյանը հիշեցնում է, որ գրանից անմիջապես հետո ինքը երեք տարի բանտարկվում է, Սեդրակը տասնութ տարով աքսորվում... Ար. Ղարիբյանը իրեն չի կորցնում, իսկույն պատասխանում է, թե «Ընկեր Աճառյան, պատերն էլ ականջներ ունեն»:

Հ. Աճառյանը այդ օրերին հաճախ էր կրկնում այդ խոսքերը, ծիծաղում էր ու զարմանում այդ պահին Ղարիբյանի արագ կողմնորոշվելու և պատասխան դտնելու հնարագիտության համար:

Իկարկե, Ար. Ղարիբյանը տաղանդավոր անհատ էր ու գիտնական: Այլ հանգամանքներում ու պայմաններում նա կարող էր նույնիսկ խոշոր քաղաքական կամ պետական գործիչ դառնալ: Նա նույնպես նախկին Հասարակարգի գոհն էր: Իմ համոզմամբ նա հույսով, հոգու խորքում, այնուամենայնիվ, հավատարիմ էր մնացել երիտասարդական տարիների իր դավանանքին ու համոզմունքներին:

Իր կյանքի վերջին շրջանում Աճառյանը արդեն ներել էր իր մոլորյալ սանիկին: Ուսուցչապետը հույսով անհիշաչար էր:

Աճառյանին, այնուամենայնիվ, անհայտ մնացին անվտանգության մարմիններին իր սանիկի մատուցած ծառայությունների շարժառիթները: 1960թ. ԳԱ ընդհանուր ժողովում 1920-ական թվականների պետական հայտնի դործիչ Հ. Ազատյանի հայտարարության միայն պարզվեց, որ Չեկան Թավրիզում Ար. Ղարիբյանին հավաքադրել և թույլատրել է ապրել Հայաստանում, հատուկ ծառայությունների դիմաց ապահովելով նրա անձի անձեռնմխելիությունը:

Մեկ անգամ, երբ նորից խոսք գնաց Ար. Ղարիբյանի մասին, Աճառյանը պատմեց հետևյալը:

Հետպատերազմյան առաջին տարիներին, մեծն Մ. Աբեղյանի մահվանից հետո, ակադեմիկոսի միակ թափուր տեղի համար Կենտկոմի նախաձեռնությամբ թեկնածու է առաջադրվում Ար. Ղարիբյանը: Հ. Աճառյանին ու Ստ. Մալխասյանցին ԳԱ նախադահույթյան նստավայր (Աբովյան 15) հասցնելու համար կառք են ուղարկում: Մալխոսի պողոտայի վերջնամասում կառքում բազմում է Աճառյանը, փողոցի հանդիպակաց շենքից միանում է Ստ. Մալխասյանցը, որ տեղավորվելով, Աճառյանի աջ ձեռքը ափերի մեջ առնելով՝ շնջում է ականջին:— Որոշված է, ջնջելու ենք: Ակադեմիայի շենքի առաջին հարկում հայտնվում է Իսահակյանը, ողջունում է և նույն ձևով Աճառյանի ձեռքն առնելով ափերի մեջ, մի փոքր կակազելով ասում:— Հրաչյա, նրա մորը պիտի լացացնենք: Ամեն ինչ արդեն պարզ է դառնում:

Ակսվում է նիստը, ներկայացվում են միակ թեկնածուի փաստաթղթերը, սպասում ելույթներին, սակայն ակադեմիկոսները լուռ են: Ձայն է խնդրում Աճառյանը, որ ենթադրելով, թե թեկնածուն, այնուամենայնիվ, մեկ ձայն կարող է ստանալ, մի քանի դրվատական խոսքեր է ասում սանիկի մասին: Քվեարկում են, և առանց արդյունքներին սպասելու, քվեարկողների մեծ մասը դուրս է դալիս դահլիճից, շնորհավորելով Ար. Ղարիբյանին, հեռանում է: Քվեարկության արդյունքներից պարզվում է, որ թեկնածուն ոչ մի ձայն չի ստացել: Այդ զավեշտական իրողության մասին հետագայում պատմում էր նաև Ար. Ղարիբյանը:

Ակադեմիկոսներից ստացած դասից մի քանի տարի անց, իհարկե, նա ընտրվեց թղթակից անդամ, իսկ 1960թ. իսկական անդամ:

Այժմ մասին, թե Աճառյանը ինչպես դարձավ Համազասպ Համբարձումյանի դոկտորական ատենախոսության ընդդիմախոսը: Կարծեմ 1951թ. դարնան վերջն էր: Հերթական այցելությանս օրը նկատեցի ճաշասենյակում, դրադարակների առջև, ուղղակի հատակին շարված հաստափոր մատյանների մի դեզ: Աճառյանը դրանից էլ սկսեց, որ դա Համազասպի դոկտորական ատենախոսությունն է՝ ութ հատոր Հոմերոսի «Իլիականի» և «Ոդիսականի» հայերեն թարգմանությունը, երկու հատոր ուսումնասիրություն՝ հայերեն և ռուսերեն: Պատմեց, որ հին ծանոթներ են, հարդում են միմյանց և այլն: Քանի որ ինքը ի վիճակի չէ ամբողջը կարդալ, խնդրել է հեղինակին բանավոր հակիրճ ներկայացնել դործը և տրտնջաց, որ այն մեկ ժամից ավելի է տևել: Աճառյանը, արված դիտողությունների համաձայն, խնդրել է պահանջված ձևով իր փոխարեն շարադրել կարծիքը: Իրոք, պաշտպանությունից 10 օր առաջ Աճառյանը իր ստորագրությունն է դրել 15 էջանոց հայերեն և ռուսերեն ընդդիմախոսականների տակ: Հաջորդ օրը նա 10 էջանոց մի ձեռագիր էլ հանձնեց ինձ, ասելով. — Այս էլ իմ կողմից քեզ հիշատակ:

Կուզեի ներկայացնել մեկ-երկու պատառիկ այդ ձեռագրից:

«Մեկ ու կես ամիս հիվանդ պառկելուց հետո բժշկիս թույլտվությամբ ներկայանում եմ այս ժողովին: Դա ցույց է տալիս, թե ինչքան հարդում և գնահատում եմ Հ. Համբարձումյանին:

Ես ու Համազասպ Համբարձումյանը ծանոթացել ենք Շուշիում, հիսուն տարի առաջ, երբ դեռ ավելի երիտասարդ էինք: Այն ժամանակ Հ. Համբարձումյանը գրել էր «Անհունի էջերից» դիրքը, որ բանաստեղծությունների ժողովածու էր: Շուտով նա թողեց անհունը իր ապագա որդու համար, որպեսզի ուզած ձևով սավառնի, իսկ իրեն պահեց էջերը: Կարդաց ամեն տեսակ դիրք, քաղցր անչափ տեղեկություններ, բեղմնավորեց թղթի կտորտանքներ, բայց ավելի կենտրոնացավ և ամփոփվեց հույն դրականություն մեջ և հատկապես Հոմերոսի վրա» և այլն: Հաջորդ էջերում Աճառյանն անդրադառնում է Հոմերոսի երկերի հայերեն թարգմանությունների պատմությանը (Թովմաճյան, Արս. Բագրատունի, Խ. Նարպեյ, Ա. Ղազիկյան, Հ. Հովհաննիսյան), գնահատում որպես անհաջող թարգմանություններ, դիպուկ օրինակներ բերում դրանցից: Անդնելով Հ. Համբարձումյանին նշում է. «Սեղանի վրա դրած այս բուրդը կամ աշտարակը, որին նայելն անդամ մարդուն պատկառանք է ներշնչում»... Ապա «ես



կարծում եմ, որ ընկ. Համբարձումյանի թարգմանությունը լավագույնն է, որովհետև վերջինն է և թարգմանիչը հնարավորություն է ունեցել բոլոր նախկին թարգմանություններն կարդալու, ուսումնասիրելու և լավագույնը կերտելու»: Ասածը հիմնավորելով՝ ավարտում է այսպես. «Ես վերջացրի խոսքս: Մնացյալ բոլոր դիտողություններս ու նկատողություններս գտնվում են այն զեկուցման մեջ, որ ընկ. Համբարձումյանը թարգմանեց ուսերեն: Ես գտնում եմ, որ Համազասպ Համբարձումյանի այս գործը մեծարժեք աշխատություն է, որ արժանի է գարձնում նրան այն գիտական աստիճանին, որ հայցում է: Կարծում եմ ներկա հարգո հասարակությունը և իմ բոլոր պաշտոնակիցներս համաձայն կլինեն իմ կարծիքին»:

Պաշտպանությունը փայլուն անցավ:

Համազասպ Ասատուրի Համբարձումյանը միանգամայն արժանի էր ոչ միայն դոկտորի գիտական աստիճանին, և եթե չլիներ ԳԱ նախագահի, մեծանուն աստղաֆիզիկոսի հայրը, իր քաղաքական առողջ հայացքների ու համոզմունքների, բազմակողմանի զարգացածության, բազմազան գիտելիքների, հատկապես գասական լեզուների և հույն-հռոմեական գրականության քաջիմացության շնորհիվ, հայ մշակույթին մատուցած ծառայությունների համար անշուշտ կկրեր նաև ակադեմիկոսի պատվավոր կոչումը:

Կարծեմ 1951թ. Աճառյանը մտադրվեց հուշեր գրել: Ինքն ի վիճակի չէր շարադրել, թելադրում էր դստերը՝ Քնարիկին և Լիզա Պետրոսյանին: Հուշերն սկսել էր ծննդավայրից: Պոլսի կեդրոնական վարժարանի թուրք ուսուցիչների բարքերը անպատշաճ համարելով աղջիկների դրի առնելը՝ բաց էր թողել: Շատ չանցած՝ ուրախությունամբ ասաց, որ այդ հատվածի համար թեկնածու է գտել. իր առաջարկին արևելյան բաժնի նախկին ուսանողներից մեկը սիրով համաձայնել էր: Հուշերի գրառումը աստիճանաբար առաջ էր դնում: Հետագայում մասնակցեց և ամբողջությամբ այդ գործին լծվեց հայտնի լեզվաբան Գրիգոր Գարեգինյանը: Դժբախտաբար հուշերը չամբողջացան: Աճառյանի կարծիքով տյոգ տարիների համար «վտանգավոր» համարվող որոշ փաստերի գրառումը ձգձգվում էր, և ի վերջո նրա կյանքի ու ժամանակի, մշակույթի և գիտության կարևոր իրողություններ ու իրադարձություններ մշտնջապես մնացին անհայտ:

1952թ. ամռանը Աճառյանը նախատեսել էր րնտանիքով ուղևորվել Օգեսա: Օգոստոսի սկզբին թրիլիսիում հյուրընկալվեց մեր ընտանիքում: Մեր տանը օրն արագ անցավ: Հանդստի ժամերին առանձնակի քչփչում էր հորս հետ, հարցուփորձ անում նրա ծննդավայրից, աստանդական կյանքից, մեր ընտանիքի սիրերյան աքսորի մանրամասներից: Հաջորդ առավոտ ճանապարհ գրինք Օգեսա՝ դիմավորելու ակնկալիքով: Մոտ երկու շաբաթ անց, օգոստոսի 14-ի թվակիր նամակում նա արգեն պատմում էր, Բաթումից Օգեսա և հետագարձ, «Ռոսիա» նավով ծովային ճանապարհորդության մասին: Ծովափին ծնված Աճառյանը, ըստ երևույթին, վերջին անգամ իր կարոտն էր առնում հարազատ ծովից: Այնուհետև հայտնում էր, որ Օգեսայում գտնում է Առտիալի բարբառախոս իր փնտրած պառավին, խոսեցնում, անհրաժեշտ գրառումներ անում՝ «Բարբառագիտության» երկրորդ հրատարակության համար, աչքերը զննել է տալիս Ֆիլատովի

Հայ օգնականներին, վերադարձին մի քանի օր էլ ծովափնյա Բաթումում է անցկացնում, հասնելով Թբիլիսի՝ անմիջապես փոխատեղում է կատարում և Մոսկվա-Երևան գնացքով բարեհաջող տուն վերադառնում:

Աճառյանի բեղմնավոր աշխատանքի մասին շատ է խոսվել: Այդ մասին տարածված կիսաառասպելական զրույցները նա հետևյալ կերպ էր բացատրում: Տարին ունի 365 օր: Եթե դրանից այլևայլ պատճառներով (հիվանդություն, հանգստանալու, տոներ ու ծեսեր կատարելու, հյուրընկալելու և հյուրընկալվելու և այլն) հանենք 65-ը, կմնա 300 օր և օրական միայն մեկ էջ շարադրելու պայմանով, կստացվի 300 էջանոց գիրք: Ցանկություն դեպքում ի գորու է կատարել գիտությունը յուրաքանչյուր գրողովո:

Տպագրվելու մասին նա իր ուրույն կարծիքն ուներ: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է համարում խստությունը տպագրության հարցում: Կարծում էր, որ ոչ լիարժեք աշխատանքների տպագրության պարագայում միայն ըստ արժանվույն կգնահատվեն դիտական անառարկելի արժեք ունեցող աշխատությունները:

Հիշում եմ, խոսք բացվեց շարադրանքի ուժի մասին: Նա լսել էր, որ ոմանք չեն հավանում իր գրելաճը՝ համարելով խիստ պարզ ու հասարակ: Աճառյանը բացատրեց, որ ինքը հայերեն է գրում, գրում է այն ձևով, որ ընթերցողն էլ գիտական հարցերը հասկանա. մլթոներե՞ն դրի, էջանոց նախադասությունները մտքերը շարադրի՞, որ կարդալով՝ ինքն էլ չհասկանա: Այնուհետև ավելացրեց, որ իր քննադատները թող բարի լինեն Ֆրանսերեն գիտական գրականություն կարդան:

Երբեմն անիմաստ համարելով ակնհայտորեն հակագիտական որոշ հարցերին լուրջ ուշադրության արժանացնելը՝ հաճախ նրբորեն երգիծում էր կամ պարզապես կատակի վերածում:

Հետպատերազմյան շրջանի առաջին տարիներին, անհասկանալի շարժառիթներով, Հայաստանի Կենտկոմի որոշմամբ (թե՞ կարգադրություն) արևմտահայ գրական լեզուն համարվեց բարբառ (Պոլսի բարբառ)՝ Հայ տասնյակ բարբառներից մեկը: Հայ լեզվաբաններից ոմանք շտապեցին հաստատել անհեթեթությունը: Աճառյանը հարկ չէր համարում մեկնաբանել, թեև հոգու խորքում անշուշտ նստվածք տվել էր:

Մի օր հարցրեց, թե ճանաչո՞ւմ եմ արդյոք Գրիգոր Ահարոնյան լեզվաբանի: Իմ միամիտ պատասխանի համար նրա ժպիտը նկատելով՝ գլխի ընկա, որ խոսքը Ահարոն Գրիգորյանի մասին է: Անցավ կատակի: Լրջորեն ասաց, որ հրապարակի վրա եղած Հայ լեզվաբանների անուն-ազգանունների իր ուսումնասիրությունները բերել է այն եզրակացություն, որ գրանցումը տառի քանակով է պայմանավորված նրանց տաղանդի աստիճանը: Օրինակ վերևում հիշատակված ազգանվան մեջ երեք ը կա: Նույնքան ը-եր են պարունակվում Արարատ Ղարիբյան, Գուրգեն Գրիգորյան (Աւակ) անուն-ազգանուններում, Հրաչյա Աճառյան, Գրիգոր Ղափանցյան, Գևորգ Զահուկյան ընդամենը՝ մեկ: Մենք ի՞նչ լեզվաբաններ ենք: Կատակելով ավելացրեց, որ եթե խնամիարար իր ազգանվան ուն որոշ պայմանով ը համարենք, հազիվ մեկ ու կես կկազմի, իսկ Աշոտ Սուքիասյան-ում ոչ մի ը չկա: Եզրակացությունը քեզ եմ թողնում:

Նա վիճակագրական տվյալներով ցանկանում էր ապացուցել, թե նույն անձնանունով կազմված անուն-ազգանվամբ (Հակոբ Հակոբյան, Հարություն Հարությունյան, Առաքել Առաքելյան և այլն) մտավորականները, մեղմ ասած, անտազանդ են: Բացառություն էր համարում Հովհաննես Հովհաննիսյանին, իսկ Րաֆֆու մասին ասում էր, որ իբր նա գիտակցաբար է հրաժարվել Հակոբ Մելիք-Հակոբյանից:

Կատակել սիրում էր Աճառյանը:

Վերջին շրջանում հայերենի ուղղագրութայն շուրջ ծավալվող բանավեճում հինը վերականգնելու կողմնակիցները հաճախ են վկայակոչում Աճառյանին: Իսկապես, նրա սրտով չէր գործող ուղղագրությունը, գժգոհում էր, նորի համար մեղագրում Մանուկ Աբեղյանին: Հին ուղղագրութայն առավելութայն օգտին իր փաստարկները բերելով՝ հաջորդ անգամ հարցրեց իմ կարծիքը: Ասացի, որ 1940թ. օգոստոսի 15-ի մասնակի բարեփոխմամբ համարյա շտկվել են 1922թ. որոշման վրիպումները, ավելացրի, որ արևելահայերենում այդ խնդիրը կար և, ինչպես հայտնի է, տաք բանավեճեր են եղել: Ուշադիր լսելուց հետո ասաց. — Ուրեմն ընդունում ես այս ուղղագրությունը: Ես կարկամեցի: Մի պահ լռելուց հետո, հարցրեց, թե ո՞ր թվի ծնունդ եմ: Իմանալով՝ 1922, ծիծաղելով ավարտեց. — Ասել կուզի, նոր ուղղագրութայն հետ ես ծնվել: Իհարկե, պարտավոր ես պաշտպանել:

1953թ. հունվարն էր, Աճառյանի կյանքի վերջին ձմեռը: Հաճախ էր բողոքում սրտի անկանոն աշխատանքից: Մտահոգված էր, բայց ցույց չէր տալիս:

Ճաշասենյակում աշխատում էի, երբ դուրս եկավ ննջասենյակից, ձեռքով նշան արեց, որ դադարեցնեմ աշխատանքս և առանց նախաբանի սկսեց. — Մտածում էի մեր ուղղագրութայն մասին: Կարծում եմ հարցը լուծված է, վերագարձը այլևս անհնար է: Երեք տասնամյակ է անցել, հին և նոր սերունդներն արգեն յուրացրել են, չեն ցանկանա վերադառնալ հին: Ավանդականը սովորեցնողը ո՞վ պետք է լինի կամ նոր ուղղագրութայն ստեղծված ահռելի գրականությունը ինչպե՞ս կարելի է վերատպագրել ավանդականով: Նորանոր փաստարկներ բերելուց հետո, ավարտեց.

— Ձէ, հարցը լուծված է, վերագարձն այլևս հնարավոր չէ:

Դա մեծ դիտնականի դատավճիռն էր հայերենի ուղղագրութայն մասին: Նա իրատես էր, դիտական հարցերը երբեք քաղաքականացնելու սովորությունն չուներ:

Իր աշխատությունների տպագրութայն հարցում Աճառյանը հաջողակ չի եղել, ինչպես ասում են, նրա բախտը չի բերել:

«Հայերենի արմատական բառարանի» 6 հատորները լույս են տեսել 1926-1932թթ. մոտ 300 օրինակով, ապակետիպ (հեղինակի ձեռագիր օրինակի բազմացմամբ): Նա էլ կատարել է բառարանի հատորները բաժանորդներին փոխանցելու փոստատարի պարտականությունները:

Բանտից ազատվելուց հետո նրա առաջին գործն է լինում «Հայոց լեզվի պատմութայն» առաջին մասի տպագրությունը: Գրքի տիտղոսաթերթում հրատարակութայն տարին նշված է 1940թ.: Այն շարված է

1922թ. բարեփոխված ուղղագրութեամբ: Բացելով վերջին էջը կարգում ենք. «Ստորագրված է տպագրութեան 08.01.1941թ.»: Կոտոր. ուրեմն, 1940թ. պատրաստ է եղել (այդ է վկայում նաև նրա ուղղագրութունը), բայց ինչ-ինչ պատճառներով չի արտոնվել հրատարակ հանել: Հատորի փաստացի պաշտոնական թույլտվութունը կատարվել է 1941թ., միայն Գ. Սևակի առաջաբանի շնորհիվ: Ըստ որի՝ Հ. Աճառյանի որդեգրած պատմահամեմատական մեթոդը և հնդեվրոպական լեզվաբանութեան դրույթները անհարիր են Ն. Մառի լեզվի նոր ուսմունքին, «սակայն դա չի արժեքազրկում գիրքը այն աստիճան, որ մենք հրատարակենք Հայագիտութեան այս խոշոր երկից» և այլն, և այլն:

Երկարատև ընդմիջումից հետո, 1949թ. նույն հրատարակչութունը հանձն է առնում «Հայոց լեզվի պատմութեան» երկրորդ մասի հրատարակութունը: Գիրքը արագորեն շարվում, տպագրվում, կազմվում, պատրաստվում է վաճառքի, որն անմիջապես կասեցվում է, որակվում որպես Ն. Մառի լեզվի մարքսիստական ուսմունքին անհամապատասխան աշխատութուն: Անվտանգութեան զգոն պաշտպանները, որպես դադափարախոսական խոտան, XX դարի կեսին միջնադարյան հրադատութեան են հանձնում ամբողջ տպագրանակը: Անհայտանում է հատորի ձեռագիրը: Վերսկսվում են Աճառյանի ծանր օրերը:

Աճառյանին շարունակ հետապնդող Ն. Մառի լեզվի նոր ուսմունքը վերջապես 1950թ. մեծ առաջնորդը ոչ մարքսիստական համարելով՝ մատուցեց կոմունիստական գաղափարախոսութեամբ շաղախված ավանգական լեզվաբանութեան պարզունակ ու աղավաղված շարադրանքը ներկայացնող իր «Մարքսիզմը և լեզվաբանութեան հարցերը» գրքուկը՝ որպես մարքսիստական:

Առայնը որպես գոգմա, թեև նոր ավերածութունների առիթ տվեց, սակայն, փառք Աստծո, երկար կյանք չունեցավ և առաջնորդի մահից որոշ ժամանակ անց մոռացվեց: Կարևորն այն էր, որ կարճ ժամանակով Աճառյանը ձերբազատվեց մառական բարգույթից, բայց հետագայում ընկավ առաջնորդի հյուսած նոր ծուղակը:

Նոր իրավիճակում նույն հրատարակչութունը հանձն առավ հրդեհված գրքի տպագրութունը: Հեղինակային ձեռագիրը, ինչպես նշվեց, անհետացել, այսինքն՝ ոչնչացվել էր: Տպագրողների շնորհիվ հրաչքով փրկված երկու օրինակների հիման վրա «Հայոց լեզվի պատմութեան» երկրորդ հատորը նորից շարվեց, էդ. Աղայանի՝ առաջնորդի լեզվաբանութեան մարքսիստական ուսմունքի ներբողականով, Աճառյանի անունից գրված «Մեղայականով» տպագրվեց և վերջապես հասավ ընթերցողներին:

Աճառյանը ցնծութեան մեջ էր, սակայն այն երկար չտևեց:

1951թ. կեսերին Հ. Աճառյանը ԳԱ հրատարակչութուն էր հանձնել «Հայոց լեզվի լիակատար քերականութուն (562 լեզունների համեմատութեամբ)» բազմահատոր աշխատութեան առաջին հատորը: Որպես ներածական հատոր, նրա երկու լեզվաբանութեան ներածութուն և լեզունների գասակարգութուն ընդարձակ մասերում քննվում են լեզվաբանութեան տեսութեան բազմաթիվ հարցեր, այդ թվում՝ լեզվի էությունը, ծագումը, զարգացումը, լեզուն իր բոլոր կողմերով ու առանձնահատկութուններով,

Հիմնավորվում են լեզուների դասակարգման սկզբունքները, կատարվում աշխարհի լեզուների գիտական գասակարգումը:

Ինչպես միշտ, ներքին օգակներում որևէ խնդիր չի առաջանում: Ձեռագիրը շարվում է, սրբագրվում, տպագրվում է ըստ նախատեսված տպագրանակի, մնում են գրքի կազմման աշխատանքները: ԳԱ Հասարակական գիտությունների բաժանմունքի նախաձեռնությամբ, երևի Հետագա բարդություններից խուսափելու և ինքնաապահովագրման նպատակով աշխատանքը տրվում է գրախոսության (ԳԱ այգ տարիների Հաստիքային գաղտնի գրախոս աշխարհագրագետ Արմենակ Ոսկանյանին): Հայագիտությունից ե լեզվաբանությունից շատ հեռու կանգնած սույն անձնավորությունը գրավոր կարծիքը բացասական է լինում, պատճառաբանվում է, որ աշխատության մեջ չեն օգտագործվել մարքսիզմի գասականների աշխատությունները, Հատկապես մեծ առաջնորդի լեզվաբանական ուսմունքը, չկան մեջբերումներ նշված դասականներից, որ գրքում խոսվում է անգամ որոշ կենդանիների «լեզուների» մասին և այլն, և այլն: Գաղափարախոսական այսօրինակ մեղագրանքներից հետո ո՞վ կարող էր երաշխավորել կամ լույս աշխարհ հանել Աճառյանի աշխատությունը: Այս հատորը ևս արժանանում է «Հայոց լեզվի պատմության» երկրորդ մասի ճակատագրին: Ամբողջ տպաքանակը այրվում է բարբարոսաբար: Այս անգամ ձեռագիրը չի անհայտանում: ԳԱ նախագահության որոշմամբ գրքի տպագրական աշխատանքների վրա ծախսված 104 հազար ռուբլին դուրս է գրվում:

Վանդալիզմը կրկնվում է:

Աճառյանի ծանր տրամադրությունը մեղմելու նպատակով ԳԱ փոխնախագահ Արդար Հովհաննիսյանը նախագահի համաձայնությունն առնելով առաջարկում է ներկայացնել այնպիսի հատոր, ուր տեսական-գաղափարական հարցեր չեն քննարկվում: Աճառյանն այս անգամ հրատարակության է հանձնում ածական և թվական բաժինները, որպես «Հայոց լեզվի իրական քերականության» առաջին հատոր: Հետագա հնարավոր անախորժություններից խուսափելու նպատակով դիրքը ձոնվում է առաջնորդին, գիտության մեծ կորիֆեին, խորհրդային լեզվաբանության հիմնադրին:

ԳԱ լեզվի ինստիտուտի հանձնարարականով աշխատությունը 1952թ. տպագրվում է:

Բուն առաջին «Ներածություն» հատորի հանդեպ վանդալային գործողությունը կոծկելու նպատակով, «Առաջաբանի» վերջում, այնուամենայնիվ, նշվում է, որ՝ «սույն դիրքը, ըստ նախնական դասավորության, կազմում էր «Լիակատար քերականության» չորրորդ հատորը:

Սակայն նախորդ հատորների հրատարակության հետ կապված որոշ դժվարություններ նկատի ունենալով, ինչպես և աշխատության տպագրությունն արագացնելու համար նպատակահարմար համարվեց հրատարակել որպես առաջին հատոր»:

Առողջական վիճակի նկատելի վատթարացումը մտատանջությունների մեջ էր գցել Աճառյանին: Մտահոգված էր անտիպ գործերի ճակատագրով: Ականատես լինելով տպագրության դժվարություններին ու բարդություններին, այգ հարցում մշտապես հարուցվող խարզավանքնե-

րին, նկատելով իր շուրջը ստեղծված անհանդուրժողական մթնոլորտը՝ մեծ հույսեր չէր կապում նաև ապագայի հետ: Սակայն լավ իմանալով իր ստեղծած գործի արժեքը՝ որպես լավատես, այնուհանդերձ, ի վերջո ապավինում էր հույսին:

Երկար մտորումներից հետո կանգ էր առել էդ. Աղայանի վրա նրան կտակելով իր անտիպ աշխատանքների հրատարակության ոչ դյուրին գործը:

Այդ հարցում նա չէր սխալվել:

Աճառյանի և էդ. Աղայանի մտերմությունը տասնյակ տարիների պատմությունն ուներ: Աճառյանն էր գուշակել տակավին երիտասարդ Աղայանի խոստումնալից ապագան, նրան փոխանցել անչափ բարունակներ: Գրատահան չէր, որ էդ. Աղայանը 1950-ականների սկզբին հայագիտության ամենաերիտասարդ դոկտոր, պրոֆեսորն էր: Շատ հարցերում Աճառյանը իր նոր ստուգաբանությունների կամ հների ճշգրտումների ու լրացումների մասին նրա հետ էր խորհրդակցում, առօրյա հուզող խնդիրների քննությունն ու վերլուծությունը նրա հետ կատարում: Նրան լիովին վստահում էր:

Ակադ. էգ. Աղայանը սիրով ու նվիրվածությամբ, իրեն հատուկ եռանգով ու ջանասիրությամբ համեմատաբար կարճ ժամանակում ավարտին հասցրեց Հ. Աճառյանի ահռելի ժառանգության հրատարակությունը:

Տպագրվեցին «Հայոց լեզվի լիակատար քերականություն» բոլոր հատորները (8 գիրք): 1955թ. վերջապես լույս աշխարհ եկավ հրատարակության գոհ դարձած «Ներածություն» հատորը: 1962թ. հինգերորդ հատորով ավարտվեց «Հայոց անձնանունների բառարանի» տպագրությունը:

Վերահրատարակվեց նաև «Հայոց գրերը» և այլն:

Վերջապես տպագրության արժանացավ Հ. Աճառյանի գլուխգործոցը՝ «Հայերենի արմատական բառարանը» չորս հատորով (1971–1980թթ.): Դա իր սիրելի Համալսարանի թանկագին նվերն էր հայագիտության երախտավորին:

Աճառյանի վաղեմի երազն իրականացավ:

Միայն էգ. Աղայանը չէր, որ արժանացել էր Աճառյանի հոգատարությանը: Գ. Զահուկյանի մասին գովեստով էր խոսում: Սիրով համաձայնել էր ստանձնել նրա ասպիրանտական ղեկավարությունը, ատենախոսության թեմա էր առաջարկել, իր տանը աշխատելու և ձեռագրերից օգտվելու արտոնություն շնորհել:

1953թ. գարնան սկզբներին նախ հետաքրքրվեց ատենախոսության րնթացքի մասին և առաջարկեց, որ ավարտելուց ու պաշտպանելուց հետո զբաղվեմ հոմանիշներով, կազմեմ բառարանը: Ասաց նաև, որ այդ իր վաղեմի ցանկությունն է եղել, անընդհատ հետաձգելով, թողել է ապագային, հետո առաջարկել է իր ասպիրանտներին ու մտերիմներին՝ Ար. Ղարիբյանին, Գ. Սևակին, էգ. Աղայանին, Գ. Զահուկյանին, բոլորն էլ սիրով համաձայնել, հանձն են առել, բայց չեն կազմել: Այնուհետև անցավ

դործնականին, խոսեց աղբյուրների մասին և խոսքն ավարտեց հավատի թեթև հույսով:

Մոտենում էր աշխատանքներիս ավարտը: Մի քանի շաբաթվա մանր-մունր դործ էր մնացել: Դրսում արդեն դարնան բույրն էր զգացվում: Ավարտին ասաց, որ ցանկանում է ինձ հետ դուրս գալ: Որոշել էր լուսանկարվել առանձին և ինձ հետ: Պատշաճ ձեռք հաղնվեց, միասին դուրս եկանք: Երկու քայլ հազիվ էինք արել, երբ Մաշտոցի պողոտա դուրս եկող փողոցի անկյունից երևաց Ավ. Իսահակյանը: Աճառյանը նկատեց, որ մոտենում է: Մտերիմներ էին: Աճառյանը խոստովանում էր, որ նրա համարձակախոսութունից երբեմն մի ներքին սարսուռ է զգում: Քանի որ Աճառյանի սկզբունքով երկուսի խոսակցությանը երրորդի ներկայությունն ավելորդ է, ասաց:

- Աչոտ, ազատ ես, նկարվելը հետաձգվեց:

1953թ. մարտի 5-ի առավոտյան ռադիոն անսպասելիորեն գուժեց առաջնորդի ծանր հիվանդության մասին: Ոգրագին հաղորդումները կրկնվում էին կարճատև ընդմիջումներով: Պարզ դարձավ, որ ժողովուրդների մեծ առաջնորդը ոչ ևս է: Ազնիվ մտավորականությունը այդ օրվանից վերջապես ազատ շունչ քաշեց: Ցնծության մեջ է եղել նաև Աճառյանը: Այդ մասին հետագայում պատմում էր էդ. Աղայանը:

Մարտի 10-ին թերթերը տպագրեցին նոր կառավարության կազմը՝ Մալենկովը նախագահ, առաջին տեղակալներ՝ Բերիա և Մոլոտով:

Նույն օրը սովորության համաձայն ժամը ուղիղ 11-ին սեղմեցի Աճառյանի բնակարանի զանգի կոճակը: Տնեցիների տրամադրությունը բարձր էր: Ուրախ ու ժպտերես դիմավորեց Աճառյանը: Նախ կշտամբեց այս օրերին իրեն մենակ թողնելու համար և անհամբերությամբ հարցրեց, թե կարդացե՞լ եմ այսօրվա թերթերը: Աճառյանը անհանգստացած էր երևում: Ի դեպ, հայերը բոլոր հիմքերն ունեին անհանգստանալու: Առանց նախաբանի հարցրի, որ երևի Բերիայի նշանակման համար է նրա տազնապը:

Նա, թե.— Ձե՛ս տեսնում իշխանությունը բռնազավթելու վտանգ: Ուսուցչապետին հանգստացնելու նպատակով նկատեցի, որ դժվար թե ռուսները այսուհետև իրենց երկրի ղեկավարությունը որևէ օտարազգու հանդուրժեն: Աճառյանը կարծես թե մի պահ համաձայնեց, որ համամիտ է դատողությանս, ապա թե .

- Ինչու՞ է այդ սլաշտոնը Բերիային վստահվել ու Մալենկովից էլ առաջինն էր նշվում:

Աճառյանը վրդովված էր: - Երևի այբբենական կարգով են գրել, - պատասխանեցի, բայց ակնթարթորեն ավելացրի.— Առաջինն է նշված, որպեսզի առաջին հերթին էլ վերացվի: Հանկարծական այս փայլատակումը երևի Բերիայի նկատմամբ իմ վերաբերմունքի բնազդային թելադրանքն էր: Աճառյանը սրտանց ծիծաղեց իմ լավատեսական միամտության վրա: Դժբախտաբար նա ականատես չեղավ հետագա իրադարձություններին:

Մեծ գիտնականն ու քաղաքացին 1953թ. ապրիլի 16-ին կնքեց իր մահկանացուն, ինչպես ասվում է՝ հրեշտակների մոտ գնաց:

Ձնայած Աճառյանի ժողովրդականությանը, մտավորականության և ուսանողության հարգանքին՝ պետության կողմից նա մեծարանքի չի արժանացել, չի նշվել նրա ծննդյան որևէ ամյակը: Դա ինքնին հասկանալի է: Միայն հետմահու, 1976 թ. նրա ծննդյան 100-ամյակի առթիվ ակադ. էդ. Աղայանի նախաձեռնությամբ Համալսարանում գիտական նստաշրջան կազմակերպվեց:

1996 թ. Երրորդ Հանրապետության արդեն իշխող կուսակցության պաշտոնաթերթ «Հայքի» մարտյան 4 համարներում (617,618,619,620), Հ. Աճառյանի ծննդյան 120-ամյակի պատրվակով, հուշերի անվան տակ լույս է տեսնում լեզվաբան Վարազ Առաքելյանի ծանակագիրը: Այն փաստորեն զրպարտագիր է հայոց լեզվի և հայագիտության ականավոր ներկայացուցիչներ Հ. Աճառյանի, Գր. Ղափանցյանի, Ար. Ղարիբյանի, Գ. Սևակի և էդ. Աղայանի հասցեին: Առիթը Աճառյանի հոբելյանը դարձնելով «հուշագիրը» զրպատության մասնաղետին հատուկ արհեստավարժի մեթոդներով ծաղր ու ծանակի է ենթարկում գիտության մեծ երախտավորներին: Ակնհայտորեն կատարելով բարձր մտավորականությանը վարկաբեկելու նախկին վարչակարգի քաղաքական պատվերը՝ հաճկատարը այդ նպատակի համար, առանց խղճի խայթի, թիրախ է դարձրել հանգուցյալներին:

Նույն զրպարտագրում «հուշագիրը» Աճառյանին հետմահու հաճոյաբար մատնում է իշխանություններին, թե նա Առաջին Հանրապետության օրերին ինչ-որ մեկի հետ վիճելիս հայտարարել է, որ ՀԅԴ անգամ է և ցույց է տվել անդամատոմսը:

Եթե իսկապես Հ. Աճառյանը Առաջին Հանրապետության տարիներին Հայ հեղափոխական դաշնակցության անդամ է եղել, ապա դա միայն պատիվ է բերում նրան: Ամեն մի ազնիվ մտավորականի պարտքն էր այդ օրհասական տարիներին սատար կանգել իշխանությանը և իշխող կուսակցությանը:

Փառք ու պատիվ Աճառյան քաղաքացուն: